

140. ՈՒՐԱՆ ԹԱՐԻՓ ԱՆՈՂ ՄԱՐԹԸ

Մին մարթ, մինգյել մին կնեգյ ըն ինում մին շենում ըպրելիս։ Էտ մարթը մին մհակ ծրեռքեն քյինաամ ա ժամակը, կյամ, թա ղըշըղներեն իատի ըրե, ինդի ըրե, վըեր քյարվան ինի, լոխմինին կըթակեմ տեն անեմ, քյարվանը կտրեմ, պիրիմ տոն։ Կնեգյը տրեսնում ա, վըեր մարթը շատ ա ուրան տերտըկ-տերտակ խուակերքավը զահլան տանում, մին փուք ցորեն ա մարթին շելակը տամ, զարկում ենղաց, ինքյն էլ շորերը փոխում, տղըմարթու շորեր կյենում, քյինամ տուն կյամ մարթին առաջը։

Մարթը ցորենն ազած, ճըղացան կյանլիս ա ինում։ Կնեգյը վըեր առաջը կտրում ա, մհակավ մեհեատ նի հըսցընում, մարթին սուրփաստուծը կտրում ա։ Մեհեատ էլ էն մին ընգյունին ա մհակավ ծրեփում, գանը ծրեռքան ինքյ օնում, ըռըշկտրոզան հըսնում տոն։

Մարթը վըեր հըսնում ա տոն, լուզին պեն ա ինգյնում, ըսկըսում ա փչիլը, թա շորս զաչաղ ինձիրա տրեռեն, մհակըս հունց յիրա ըրե, վըեր դուլվան կացավ, վըեր ինգյավ, էն մթնավը կորավ, գանն էլ վըեր տրեռավ, ցրե եկավ։

Կնեգյը վըեր մհակն ան ալրին պարկը տուն ա օնում առաջը, մարթին աշկերը մնամ ըն պեց։